ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 դեկտեմբերի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

184
(2664)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 159

Նախորդ տարվա դեկտեմբերի 20-ին ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Գեղամ Մանուկյանն ու Աննա Գրիգորյանը խորհրդարանում հրավիրված ասուլիսի ժամանակ հայտարարեցին, թե գոյություն ունի մի փաստաթուղթ, որի համաձայն էլ հայկական զորքերը հետ էին քաշվել Սյունիքի մարզի Գորիս-Կապան ճանապահահատվածից, ինչի հետեւանքով ճանապարհի այդ հատվածի հսկողությունն անցել էր Ադրբեջանին: Փաստաթղթի բովանդակությունը, ըստ պատգամավորների, գաղտնի է պահվում, եւ նույնիսկ իրենց չի հաջողվել ծանոթանալ դրան:

Այն, ինչի մասին խոսվում էր, ըստ էության, Հայաստանի եւ Ռուսաստանի պաշտպանության նախարարներ Վաղարշակ Հարությունյանի եւ Սերգեյ Շոյգուի միջեւ 2020 թվականի դեկտեմբերին կնքված փաստաթուղթն էր, որի գոյության մասին հայտնի է դարձել միայն 2021թ.-ի աշնանը, թեեւ իշխանություններ պնդում են, թե հանրությունը տեղեկացված է եղել: Փաստորեն, Ախ քարտուղարը հայտարարել է, թե 2020թ.-ի դեկտեմբերին ստորագրված փաստաթուղթը ոչ թե զորքերի հետքաշման մասին էր, այլ ճանապարհի օգտագործման, որը տեւելու էր այնքան, մինչեւ Հայաստանը կառուցեր շրջանցող մեկ այլ ճանապարհ (այս դեպքում՝ Տաթեւ-Աղվանի ճանապարհը): Եթե Հայաստանի իշխանությունները դրա կառուցումը սկսեին հենց 2020թ.-ի դեկտեմբերից, ապա իրենց տրամադրության տակ ի սկզբանե կունենային 11 ամիս եւ ոչ թե 5:

«Փաստերի ստուգման հարթակ»-ը նկատում է՝ կառավարությունը դեռեւս 2020 թվականի դեկտեմբերին, ստորագրելով փաստաթուղթ, համաձայնել է շրջանցիկ ճանապարհը կառուցելուն պես հրաժարվել Գորիս-Կապան ճանապարհից, սակայն այլընտրանքային ճանապարհի կառուցումը սկսել է ստորագրումից ավելի քան կես տարի անց՝ արդյունքում ժամանակի սղություն ունենալով ճանապարհի պատշաճ կառուցման համար: Ընդամենը 5 ամսում իշխանությունները վերանորոգեցին շրջանցող ճանապարհը, եւ հաշվի առնելով աշխատանքների մեծ ծավալը՝ իսկապես ֆորսմաժորային իրավիճակում ճանապարհը հանձնվեց շահագործման: Վարչապետ Փաշինյանի ձեւակերպած «ֆորս մաժորը», սակայն, ոչ թե անհաղթահարելի ուժի ազդեցությամբ ստեղծված իրավիճակ էր, այլ ավելի քան կես տարի այդ ուղղությամբ գործուն քայլեր չձեռնարկելու հետեւանք. աշխատանքները պատշաճ եւ ժամանակին չեն կատարվել:

Ազգային ժողովի ղեկավարությունը մտադիր է հերթական պարգեւավճարը շնորհել յուրայիններին: «Ժողովուրդ» օրաթերթի խորհրդարանական աղբյուրներն են հայտնում՝ ԱԺ-ում որոշվել է 13-րդ աշխատավարձի տեսքով, ամենայն հավանականությամբ, միայն իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորներին, նրանց օգնականներին ու խմբակցության փորձագետներին բաժանել պարգեւավճարներ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների թե՛ պատգամավորները, թե՛ նրանց օգնականներն ու թե՛ փորձագետները հերթական անգամ պարգեւավճար չեն ստանա: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունն ԱԺ լրատվական վարչությունը մեկնաբանեց՝ այդպես էլ չհերքելով, որ նման մտադրություններ ԱԺ ղեկավարությունը չունի: «Պարգեւատրելու մասին կարգադրությունը սովորաբար հրապարակվում է Ազգային ժողովի պաշտոնական կայքում, ու մինչեւ այժմ ԱԺ նախագահի կողմից ստորագրված նման կարգադրություն չկա»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց խորհրդարանի լրատվական վարչության ղեկավար Լաուրա Անտոնյանը: Մեր աղբյուրները վստահեցնում են, որ որոշում կա պարգեւավճարներ տալու միայն քպ-ական պատգամավորներին ու նրանց օգնական-գործավարներին:

Ազգային ժողովում հերթական հրաժարականն է սպասվում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանը ցանկանում է հրաժարական տալ ու լքել հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Մեզ հասած լուրերի համաձայն՝ երեկվա՝ դեկտեմբերի 20-ի արտահերթ նիստի մեկնարկից առաջ իշխող «Քաղաքացիական պայմանագիրը» խմբակցության նիստ է արել, ինչի ժամանակ էլ հենց Աղաջանյանը հայտնել է իր մտադրության մասին: Աղաջանյանը թիմակիցներին փոխանցել է, որ, իր փոխարեն, հանձնաժողովի ավելի լավ նախագահ կարող են գտնել: Թերեւս չի սխալվում Աղաջանյանը, քանի որ նախկին դիջեյը չէր կարող խորհրդարանի կարեւորագույն հանձնաժողովը ղեկավարել: Իհարկե, փորձեցինք նաեւ Աղաջանյանի տեսակետը լսել: Արտաքին հարաբերությունների հանձնաժողովից մեզ ասացին, որ մեր՝ նաեւ Աղաջանյանի տեսակետը լսելու խնդրանքը կփոխանցեն վերջինիս, ՔՊ-ական պատգամավորը, սակայն, երեկ՝ ամբողջ օրվա ընթացքում, մեզ հետ կապ չհաստատեց:

2008 թվականի «Մարտի 1»-ի քրեական գործով մեղադրյալների հետ կապված քրեական վարույթներով Հակակոռուպցիոն կոմիտեն գնում է կարճման որոշումների: Մասնավորապես՝ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը վաղեմության ժամկետի հիմքով կարճել է ՀՀ ոստիկանության նախկին պետ Ալիկ Սարգսյանի դեմ հարուցված քրեական գործը: Նույն կերպ կարճվեցին ոստիկանապետի տեղակալ Սաշիկ Աֆյանի, ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալ Հովհաննես Թամամյանի դեմ հարուցված քրեական գործերը: Քրեական վարույթով անցնող մեղադրյալները, հայտնվելով բարդ իրավիճակում, չեն կարողացել դուրս գալ երկրից ու ստիպված համաձայնել են՝ վաղեմության հիմքով գործը կարճվի: Այսպես, «Մարտի 1»-ի գործով վարույթները հերթով տապալվում են, եւ Նիկոլ Փաշինյանը նաեւ «Մարտի 1»-ը բացահայտելու իր խոստումը չկատարեց:

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

ՆՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԳԱ

Դեկտեմբերի 11-ից քաղաքացիական հագուստով մի խումբ ադրբեջանցիներ, ներկայանալով որպես բնապահպան ակտիվիստներ, շինծու բնապահպանական մտահոգությունների պատրվակով փակել են Արցախը Հայաստանի եւ աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Այս ընթացքում Ադրբեջանին Լաչինի միջանցքը բացելու կոչեր եւ հայտարարություններ հնչեցին տարբեր երկրների եւ կազմակերպությունների կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթն այս եւ այլ հարցերի շուրջ զրուցել է ԵԽ պատգամավոր Անդրեյ Կովաչեւի հետ:

-Պարոն Կովաչեւ, դեկտեմբերի 1-ից քաղաքացիական հագուստով մի խումբ ադրբեջանցիներ, ներկայանալով որպես բնապահպան ակտիվիստներ, շինծու բնապահպանական մտահոգությունների պատրվակով փակել են Արցախը Հայաստանի եւ աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Ի՞նչ եք մտածում ստեղծված իրավիճակի մասին:

-Շատ ծայրահեղ իրավիճակ է, քանի որ հիմա, ինչպես հասկացա, 9 օր է արդեն, որ Լեռնային Ղարաբաղի հայերն արգելափակված են եւ չեն կարողանում դուրս գալ: Փաստորեն, այդ Լաչինի միջանցքը երաշխավորվել է դեռ 2020 թվականի հրադադարի պայմանագրով, իսկ բնապահպան ակտիվիստների պատրվակը՝ ոչ: Ինձ շատ է մտահոգում իրավիճակը, քանի որ ես ամեն օր ուշադիր հետեւում եմ, թե ինչ է կատարվում: Հիվանդանոցների վերակենդանացման բաժանմունքներում գտնվող այն մարդկանց, որոնք գտնվում են ծայրահեղ ծանր վիճակում, չեն կարող տեղափոխել Հայաստան, ինչը շատ ցավալի է:

-Ինչպե՞ս է հնարավոր կանգնեցնել Ադրբեջանին:

-Մենք կարող ենք միայն բանակցությունների կոչ անել, եւ այսօր (երեկ-խմբ.) խորհուրդը որոշեց, որ մոնիթորինգային առաքելության ավարտը կլինի դրա փոխարինումով, այսինքն՝ Եվրոպական Միության կողմից այլ առաքելություն: Դա կլինի հատուկ առաքելություն՝ Եվրոպական Միության ընդհանուր անվտանգության եւ պաշտպանության քաղաքականությանը համապատասխան: Ես շատ մեծ հույսեր ունեմ այս առնչությամբ: Կարծում եմ՝ Ադրբեջանը եւս ցանկանում է, որքան հնարավոր է արագ, լուծում գտնել եւ ավելի չվատացնել այնտեղ հումանիտար իրավիճակը. դրան ձգտում են նաեւ Բրյուսելում: Նրանք ձգտում են ադրբեջանական կողմին ապացուցել, որ Լաչինի միջանցքի ապաշրջափակումն այժմ անչափ կարեւոր է:

-Սակայն ինչո՞ւ է միջազգային հանրությունը պասիվ, եւ, ամեն դեպքում, Ադրբեջանին կանգնեցնել չի հաջողվում:

-Այս հարցն արդեն ակտուալ է մի քանի տարի: Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ Լեռնային Ղարաբաղի հարցով վեճերի լուծման հարցում մենք չունենք շատ առաջընթաց: Միջազգային հանրությունը, ցավոք, ունի սահմանափակ հնարավորություններ խառնվելու այդ հարցին: Եվրամիությունը ռազմական ուժեր չունի այնտեղ գնալու համար: Պատասխանատվություն ունեն ռուսները, խաղաղապահ առաքելության ներկայացուցիչները, սակայն չեն իրականացնում իրենց պարտավորությունները: Խաղաղապահներն այնտեղ չեն իրականացնում այն պարտավորությունները, որոնք ունեն: ԵՄ-ն նման առաքելություն չունի, սակայն ցանկանում է ունենալ իր մշտական ներկայացուցիչը Հայաստանում:

-Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ է ադրբեջանական կողմը փակել ճանապարհը, ի՞նչ են ցանկանում:

-Շատ դժվար է կանխատեսել, թե նրանք ինչ են մտածում կամ ցանկանում: Կհիշեք, որ անցյալ ձմռանը նաեւ գազատարի պայթյուն եղավ, եւ այն ժամանակ եւս անհասկանալի էր, թե նրանք ինչ են ցանկանում, իսկ հիմա էլ Լաչինի միջանցքի շրջափակումն է: Առաջին տարբերակն այն է, որ ամեն կերպ ցանկանում են բարդացնել Ղարաբաղի հայերի կյանքը, եւ որ նրանք հետ կանգնեց Ղարաբաղից: Այս ամենը հակադրվում է այն եռակողմ պայմանավորվածություններին, որոնք առկա են: Ռուսաստանը եւս այս եռակողմ պայմանավորվածության կողմ է եւ պետք է անվտանգության երաշխավոր լինի:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՀԱՏՈՒԿ ԽՆԴՐԱՆՔ

ԱՐՑԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ Է

Ազգային Ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է. «Արդեն ավելի քան 9 օր է՝ Արցախը շրջափակված է Ադրբեջանի կողմից: Շուրջ 120.000 արցախցիներ կրում են հումանիտար ճգնաժամի ծանր հետեւանքները: Արցախի Հանրապետության բուժհաստատություններում ծանր եւ ծայրահեղ ծանր վիճակում գտնվող հիվանդներին շրջափակման հետեւանքով չեն կարողանում տեղափոխել հայաստանյան բուժհաստատություններ եւ տրամադրել պատշաճ բուժօգնություն: Ցավոք, ծանր վիճակում գտնվող հիվանդներից մեկը մահացել է...

Ահազանգում եմ միջազգային գործընկերներիս. միջազգային հանրության կողմից անպատժելիության հետեւանքով առաջիկայում արդեն ականատես ենք լինելու զանգվածային անդառնալի հետեւանքների: Բոլոր մատակարարումները, ելումուտը Արցախ պարզապես արգելափակված են:

Միջազգային հումանիտար իրավունքի այսպիսի աղաղակող խախտման հեղինակ Ադրբեջանը պետք է պատժվի: Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցները, միջազգային համապատասխան իրավաքաղաքական գործիքակազմի կիրառումը հրամայական են՝ հասնելու համար ագրեսորից Արցախի 120.000 բնակչության փրկությանը:

Այս իրավիճակում հատուկ խնդրանքով դիմել եմ Ռուսաստանի Դաշնության օմբուդսմեն Տ. Ն. Մոսկալկովային եւ Ռուսաստանի Դաշնության նախագահին առընթեր քաղաքացիական հասարակության զարգացման եւ մարդու իրավունքների գծով խորհրդի նախագահ Վ. Ա. Ֆադեեւին, որպեսզի ռուս խաղաղապահների միջոցով ռուսական հումանիտար օգնություն ուղարկվի Արցախ: Ներկայացրել եմ առաջնային անհրաժեշտության կարիքների ցանկը:

Քաղաքակիրթ աշխարհը պարզապես իրավունք չունի անտարբեր գտնվելու 120.000 վտանգված կյանքի հանդեպ... Արցախում հումանիտար արտակարգ իրավիճակն անխուսափելի է...»:

ՊԱՆԴՈԿՆԵՐԻ ՍԻՐԱՀԱՐԸ

ՀՀ Ազգային ժողովը 13 մլն 500 հազար դրամի պայմանագիր է կնքել «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ի հետ: Ըստ պայմանագրի՝ կազմակերպությունն իրականացրել է հյուրասիրության ծառայություններ պաշտոնական պատվիրակությունների ընդունելության համար: Հետաքրքիր է, որ առաջին անգամը չէ, որ խորհրդարանն այս ընկերության հետ մեկ անձից իրականացվող գնումների սկզբունքով պայմանագիր է կնքում, եւ բոլորը՝ պաշտոնական պատվիրակությունների ընդունման նպատակով: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այս ՍՊԸ-ին պատկանող պանդոկները, կարծես թե, դարձել են իշխանությունների սիրելի վայրը, եւ պատվիրակություններին հյուրասիրելու համար հենց դրանք են ընտրում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Երեւան» պանդոկում 13 մլն 500 հազար դրամ արժողությամբ հյուրասիրության ժամանակ մատուցվել են սառը խորտիկներ, աղցաններ, տաք խորտիկներ, ապուրներ, խավարտներ, ալկոհոլային խմիչքներ, կոկտեյլներ, տաք ըմպելիքներ, աղանդեր եւ միրգ: Նույն ընկերության հետ մեկ այլ պայմանագիրն արժեցել է 5 մլն դրամ: Այդ անգամ ընդունելությունը կազմակերպված է եղել «Պանդոկ Երեւան Գետափին»-ում եւ կրկին աչքի ընկել ճոխ հյուրասիրությամբ: Նկատենք, որ ԱԺ օտարերկրյա պատվիրակությունները երբեմն հայկական կնունքի կամ ծնունդի են ակամայից մասնակցում պանդոկներում. մի կողմում պաշտոնական պատվիրակությունն է ճաշում՝ քննարկելու պետական կարեւոր հարցեր, մյուս կողմում «պապիկը թոռնիկի ցավն է տանում» ֆոլկլորային երգերով:

ԳՈՐԾԸ ԿԱՐՃՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը կարճել է ԱԺ ԲՀԿ խմբակցության նախկին պատգամավոր Վանիկ Ասատրյանի դեմ հարուցված քրեական վարույթը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նախկին պատգամավոր Վանիկ Ասատրյանի պաշտպան Էմիլ Բեգլարյանը հաստատեց տեղեկությունը եւ հավելեց, որ վերջինս չի ընդունել իրեն առաջադրված մեղադրանքը: Պաշտպանի խոսքով՝ առողջական խնդիրներից ելնելով է առաջարկ եղել, որ Վանիկ Ասատրյանի նկատմամբ հարուցված քրեական գործը վաղեմության ժամկետի հիմքով կարճվի: Հիշեցնենք, որ Վանիկ Ասատրյանին մեղադրանք է առաջադրվել 2017 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընտրակաշառք բաժանելու գործով: Ընտրակաշառքի գործով կալանավորվել էր նաեւ նախկին պատգամավոր Աբրահամ Մանուկյանը: Ի դեպ, Աբրահամ Մանուկյանի գործով դեռեւս սայլը տեղից չի շարժվում. քրեական վարույթը դեռ կարճված չէ:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԻՐԱՀԱՐԸ

ՀՀ ֆինանսների նախկին նախարար Տիգրան Խաչատրյանը երեկ ՀՀ նախագահի հրամանով նշանակվեց ՀՀ փոխվարչապետ: Տիգրան Խաչատրյանն այս կառավարության այն եզակի պաշտոնյաներից է, որ բարձր պետական պաշտոններ է զբաղեցրել նաեւ նախկին իշխանությունների օրոք:

Այսպիսով, ո՞վ է ՀՀ նորանշանակ փոխվարչապետը:

Նա իր գործունեությունը սկսել է 1995 թվականից՝ որպես ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջատար մասնագետ, ապա տարբեր պաշտոններ է զբաղեցրել Ֆինանսների, էկոնոմիկայի նախարարություններում: 2006-2016 թթ.-ին շուրջ 10 տարի Խաչատրյանը սոլիդ պաշտոն էր զբաղեցնում հանրությանը հայտնի «Վալլեքս»-ում. նա հիշյալ ընկերությունների խմբի ֆինանսական տնօրենն էր: ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարի տեղակալից հետո զբաղեցրել է նախարարի, ապա էկոնոմիկայի եւ ֆինանսների նախարարների պաշտոնները. այժմ էլ ՀՀ փոխվարչապետն է:

ArmLur.am-ը ներկայացնում է նաեւ Տիգրան Խաչատրյանի՝ 2020 թվականի ներկայացրած հայտարարագիրը:

Նախարարը Երեւանի կենտրոնում ունի մեկ բնակարան, երկու հողամաս՝ մեկը Կոտայքի մարզի Ձրվեժում, մյուսը՝ Տավուշի մարզի Դիլիջանում, մեկ ամառանոց՝ Շենգավիթում, մեկ ավտոտնակ ու անհատական բնակելի մեկ տուն՝ Ձրվեժում: Ի դեպ, Խաչատրյանը բնակարանը գնել է 2016 թվականին, երբ զբաղեցնում էր ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարի տեղակալի պաշտոնը:

Ավտոմեքենա չունի. համենայնդեպս, այդպես նշված է իր հայտարարագրում, իսկ պաշտոնը ստանձնելու հայտարարագիր դեռ չի ներկայացրել Խաչատրյանը, որպեսզի պարզենք՝ ունի, թե ոչ: Նշենք, որ նախարարը 28 հազար 100 դոլարի չափով պարտատոմսեր ունի, իսկ հանձնած ավանդերը կազմել են 15000 դոլար: Բանկային հաշիվները կազմել են 206 դոլար, 350.000 դրամ, իսկ կանխիկ դրամը՝ 18.000 դոլար:

Տիգրան Խաչատրյանի՝ նախորդ տարվա եկամուտը, բացի ստացած փոխառություններից, 13 մլն 222 հազար դրամ աշխատավարձն է, որը նա ստացել է, երբ էկոնոմիկայի նախարար էր: Բացի այս, տրված փոխառություններից ստացած տոկոսը կազմել է 517.000 դրամ եւ 554 դոլար: Ստացված փոխառությունը 825 000 դրամ է:

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

ՃԱՆԱՊԱՐՀԻ ԿՈՂՔԵՐԻՆ ԵՆ ԿԱՆԳՆԱԾ

Հայաստանն Արցախին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, շարունակում է փակ մնալ: Ճգնաժամն ու շրջափակումը շարունակվում են: Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանը օպերատիվ շտաբի նիստի ժամանակ հայտարարել էր՝ բանի դեռ ադրբեջանցի ցուցարարներն այդտեղ են, ամեն րոպե կարող են արգելափակել հայկական մեքենաների ճանապարհն ու նաեւ անցակետ տեղադրել:

«Ճանապարհի կողքերին կանգնած են, եւ իրենք կարող են կանգնեցնել կամ չկանգնեցնել մեքենաները, երբ ուզենան, դրա համար մենք ասում ենք, որ դա անընդունելի է, եւ պետք է դուրս գան ու չխանգարեն մեքենաների հանգիստ շարժմանը: Այդ կողմից դա միակ որոշումն է, որովհետեւ եթե մենք ընդունում ենք, որ իրենք կարող են այնտեղ կանգնած լինել, նայեն՝ ինչ մեքենա են թողնում ու ինչ մեքենա չեն թողնում, դա դառնում է իրենց համար հնարավորություն «կապեպե» ստեղծելու», - հայտարարեց նա:

Արդեն իններորդ օրն է՝ իրենց բնապահպան անվանող ադրբեջանցիները միջանցքի Շուշի-Քարինտակ հատվածում են. երեկ օրը բացել են համերգային կատարմամբ: Ակցիայի բնապահպանական հունը պահպանելու համար ռուբիկ կուբիկներով «էկոցիդ» պաստառ են հավաքել: Ադրբեջանական լրատվամիջոցները շարունակում են պնդել, որ «ճանապարհը բաց է», եւ «այսօր այդտեղով դարձյալ շտապօգնության մեքենա է անարգել անցել»:

Արցախից, սակայն, հայտնում են, որ ոչ մի նոր հիվանդի տեղափոխել հնարավոր չի եղել. երեկ մեկնած շտապօգնության միակ մեքենան է վերադարձել Կարմիր խաչի ուղեկցությամբ: Արցախյան բուժհաստատություններում պահպանվում է արտակարգ իրավիճակը: 13 փոքրիկներ վերակենդանացման բաժանմունքում են, Ստեփանակերտի Հանրապետականում շուրջ մեկ տասնյակ քաղաքացի կա վերակենդանացման բաժանմունքնում: Բուժպարագաների ու դեղորայքի սղության պայմաններում Արցախում շուրջ մեկ շաբաթ է՝ պլանային վիրահատությունները դադարեցվել են:

Մննդամթերքի սուր ճգնաժամ առայժմ չկա, բայց միրգ-բանջարեղենի կրպակներում արդեն միայն թանկարժեք արեւադարձային պտուղներն են մնացել:

«Մարդ չկա, ապրանք չկա. ի՞նչ տանեմ երեխեքի համար», - հարցնում է քաղաքացիներից մեկը:

Սուպերմարկետներում արդեն սպառվում են ամանորյա տոների համար կուտակած պաշարները:

«Շաքարավազի պակասություն է մեզ մոտ, անկեղծ ասած՝ արդեն ծխախոտն էլ է պակասում», - ասում է մյուսը:

Ըստ Ստեփանակերտում տեղի ունեցած օպերատիվ շտաբի նիստից հետո տարածված պաշտոնական հաղորդագրության՝ ալյուրի պաշարները բավարար են, հացի արտադրության հետ կապված խնդիրներ չկան: Գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի պաշարներից որոշ տեսակի ապրանքատեսակներ են տրամադրվել խանութներին: Ռուբեն Վարդանյանը պաշտոնյաներին հանձնարարել է նվազագույնի հասցնել բենզինով շահագործվող ավտոմեքենաների թիվը՝ նախապատվությունը տալով գազով աշխատող ավտոմեքենաներին:

Տարվա այս սեզոնին Արցախից արտերկրի հանգստավայր կամ հարազատներին տեսակցելու գնացող ուղեւորների թիվը սովորաբար մեծ է լինում: Ստեփանակերտում գործող տուրիստական ընկերությունում անընդհատ զանգեր են ստանում՝ ավիատոմս գնած արցախցիները փորձում են հետ ստանալ ձախողվող թռիչքների գումարը: Ընկերության ներկայացուցիչ Սվետլանա Մովսիսյանն ասում է՝ անորոշության մեջ հայտնված արցախցի ուղեւորներին միջազգային ավիափոխադրողների մեծ մասը ըմբռնումով են մոտենում, հայկական կազմակերպություններն էլ՝ մեկ բացառությամբ. «Ունենք ուղեւոր, որ գնել էր տոմս Fly one Armenia ավիաընկերությունից, թռիքչը պիտի լիներ դեկտեմբերի 13-ին՝ շրջափակման հաջորդ օրը: Իհարկե, դիմեցինք ընկերությանը, բազմաթիվ նամակներ ուղարկեցինք էլփոստով, բայց արձագանք չկար. ստեղծված իրավիճակում ոչ մի օգնություն չցուցաբերեցին», - ասաց նա:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի նախագահությամբ հրավիրվել է Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստ, որի օրակարգում Արցախում ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունն էր:

Քննարկվել են Արցախի Հանրապետության անվտանգության եւ ժողովրդի կենսապահովման համար ձեռնարկվող քայլերը, հումանիտար աղետի կանխման հնարավորությունները:

Նախագահ Հարությունյանը քննարկված հարցերի վերաբերյալ մի շարք հանձնարարականներ է տվել:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԲՈՂՈՔ

Ադրբեջանը նոր միջպետական բողոք է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան. հայտնել է ՄԻԵԴ-ում լիազոր ներկայացուցիչ Չինգիզ Ասկերովը (գրում են ադրբեջանական աղբյուրները):

Նրա խոսքով՝ «բողոքում փաստեր են ներկայացված այս տարվա մայիս-օգոստոս ամիսներին Լաչինում, Ջաբուխում (Աղավնո) եւ Սուսայում (Սուս) ադրբեջանցիների հարյուրավոր օբյեկտների ոչնչացման համար Հայաստանի պատասխանատվության մասին»: Սա ՀՀ-ի՝ Լաչինի միջանցքի հետ կապված հայցի պատասխանն է:

ՀՐԱԺԵՇՏԻ ՈՒՂԵՐՁ

ԱՄՆ-ն հանձնառու է Հայաստանի ինքնիշխանության հարցում եւ կշարունակի աշխատել Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղաղության հաստատման ուղղությամբ. այս մասին վստահեցրել է Հայաստանում դիվանագիտական առաքելությունն ավարտող ԱՄՆ դեսպան Լին Թրեյսին հրաժեշտի իր ուղերձում:

«Արդեն 3 տարուց ավելի Հայաստանում եմ: Երկրի համար դժվարին ժամանակներ էին. չնայած անհերքելի մարտահրավերներին՝ ես լավատես եմ Հայաստանի ապագայի հանդեպ: Լավատեսությանս հիմքում ժողովուրդն է»,-նշել է Թրեյսին:

Նրան ոգեշնչում է հայ-ամերիկյան հարաբերությունների դրական ուղղվածությունը: Խոսնակ Նենսի Փելոսիի վերջին այցն ընդգծել է երկու երկրների գործընկերության դրական հետագիծն ու ԱՄՆ-ի աջակցությունը Հայաստանին:

Նա 2021 թվականին նախագահ Բայդենի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը եւս մեկ կարեւոր իրադարձություն է համարել: «ԱՄՆ-ն հանձնառու է Հայաստանի ինքնիշխանության հարցում, եւ մենք կշարունակենք աշխատել Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղաղության հաստատման ուղղությամբ»,-նշել է Թրեյսին:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՆԵՐԿՐՈՒՄ

ՀԱԳՈՒՍՏ՝ ԱՌԱՆՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման դեպարտամենտի ծառայողների ձեռնարկած ծավալուն եւ համակարգված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել եւ կանխվել է արտաքին տնտեսական գործունեության ընթացքում տնտեսվարող կազմակերպության կողմից իրականությանը չհամապատասխանող հայտարարագրերի հիման վրա, առանց պատշաճ մաքսային հսկողության մեծածավալ ապրանքների ՀՀ ներկրման կազմակերպված եւ տեւական ժամանակ կիրառվող հանցավոր մեխանիզմ, ինչի արդյունքում տնտեսվարողը չարամտորեն խուսափել է ՀՀ պետբյուջե առանձնապես խոշոր չափերի հարկերի եւ տուրքերի վճարումից:

Մասնավորապես, մի քանի ընկերություններ փաստացի ղեկավարող եղբայրներ Ռ.Կ-ն, Հ.Կ-ն եւ Կ.Կ-ն նախնական համաձայնություն են ձեռք բերել ՀՀ-ում գործող առեւտրային կենտրոններում չինական եւ թուրքական արտադրության ապրանքների վաճառքով զբաղվող մի շարք տնտեսվարողների հետ՝ վերջիններիս կողմից առեւտրային նպատակներով Թուրքիայից ձեռք բերված խոշոր խմբաքանակներով չինական եւ թուրքական արտադրության հագուստեղենն առանց պատշաճ ձեւակերպման եւ մաքսային վճարումների ՀՀ ներկրելու վերաբերյալ: Յուրաքանչյուր մեկ կիլոգրամ ապրանքի մաքսանենգ ՀՀ ներկրման համար տնտեսվարողները եղբայրներին վճարել են միջինը 4 ԱՄՆ դոլարին համարժեք գումար: Գործող հանցավոր մեխանիզմի համաձայն՝Ռ.Կ-ն, Հ.Կ-ն եւ Կ.Կ-ն պարբերաբար Վրաստանից ՀՀ են ներկրել միաժամանակ երկու բեռնատարների մեջ բարձված ապրանքներ, որոնցից առաջինը բեռնված է եղել միրգ-բաջարեղենով, ինչը պատշաճ ձեւակերպված է եղել մաքսային փաստաթղթերում, իսկ երկրորդը բեռնված է եղել չինական եւ թուրքական արտադրության հագուստով եւ այլ ապրանքներով, սակայն մաքսային փաստաթղթերում ձեւակերպված է եղել որպես միրգ-բանջարեղեն: Օրինական բեռով բեռնատարը սահմանային անցակետում նախնական ձեւակերպումներն իրականացնելուց հետո անմիջապես ուղեւորվել է Երեւանում գործող մաքսային պահեստ՝ մաքսազերծում իրականացնելու նպատակով, իսկ ապօրինի բեռով բեռնված բեռնատարը սահմանային անցակետում որպես միրգ-բանջարեղեն նախնական ձեւակերպում իրականացնելուց հետո անմիջապես ուղեւորվել է Ռ.Կ-ի, Հ.Կ-ի եւ Կ.Կ-ի կողմից ՀՀ Արարագածոտնի մարզում վարձակալված պահեստ, որտեղ հանցավոր մեխանիզմում ներգրավված այլ անձանց օժանդակությամբ, վերջիններիս կողմից, առանց մաքսային կետում կնքված կապարակնիքի տեղաշարժման եւ հեռացման, բեռնաթափվել են ապօրինի ներկրված հագուստները եւ անմիջապես առաքվել տնտեսվարող սուբյեկտներին պատկանող առեւտրային կետեր, որից հետո օրինական եղանակով ներկրված եւ մաքսազերծված հիշյալ առաջին բեռնատարը տեղափոխվել է նույն պահեստ, որտեղ մաքսազերծված միրգ-բանջարեղենը բեռնվել է ապօրինի հագուստի փոխարեն եւ ուղեւորվել մաքսային տերմինալ՝ մաքսազերծման համար: Դեպքի առթիվ 2022 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որը, քննչական ենթակայության կանոններին համապատասխան, ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային վարչություն: Հանցավոր գործունեության կանխման նպատակով իրականացված լայնածավալ օպերատիվ-հետախուզական եւ վարութային գործողությունների արդյունքում 2022 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության եւ ՀՀ քննչական կոմիտեի աշխատակիցների կողմից կանխվել է վերը նկարագրված հանցավոր եղանակով հագուստեղենի ներկրման հերթական դեպքը, որի արդյունքում Ռ.Կ-ի, Հ.Կ-ի եւ Կ.Կ-ի կողմից ՀՀ Արարագածոտի մարզում վարձակալված պահեստում հայտնաբերվել է վրացական հաշվառման համարանիշի բեռնատար ավտոմեքենան, որում փաստացի գտնվել է ավելի քան 9.5 տոննա հագուստեղեն, որը, սակայն, բեռնատար ավտոմեքենայի տարանցիկ մաքսային փաստաթղթերում նշված է եղել որպես մանդարին: Քրեական վարույթի շրջանակներում 4 անձ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալվել են, եւ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու միջնորդություններ են ներկայացվել դատարան: Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է, իրականացվում են քննչական անհրաժեշտ գործողություններ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ դեպքի բոլոր հանգամանքները եւ հանցավոր մեխանիզմում պաշտոնատար անձանց հնարավոր ներգրավվածությունը պարզելու եւ նրանց նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցներ կիրառելու համար:

ՕՐԲԵԼԻ ՓՈՂՈՑ

ՄԱՔՐՈՒՀԻՆԵՐԸ 12.5 ԿԳ ՈՍԿԻ ԵՆ ԳՏԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում իրականացված քննչական ծավալուն միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է մեծաքանակ՝ ընդհանուր 12,5կգ քաշով ոսկյա ձուլակտորներ: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում միջոցներ են ձեռնարկվում հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Մասնավորապես, քննչական, վարութային գործողությունների արդյունքում Երեւան քաղաքի երկու բնակչուհիներ վարույթն իրականացնող մարմին են ներկայացրել տարբեր վայրերում առանձին-առանձին թաքցված մի դեպքում 6 կիլոգրամ 860 գրամ քաշով, մյուս դեպքում՝ 5 կիլոգրամ 652 գրամ քաշով ամբողջական եւ մասնատված ենթադրաբար ոսկյա ձուլակտորներ:

Քննությամբ ձեռք բերված նախնական տվյալներով՝ նշված կանայք, որպես մաքրուհի, հրավիրված են եղել աշխատելու Երեւան քաղաքի Օրբելի փողոցում գտնվող շենքի բնակարաններից մեկում, որը տվյալ պահին եղել է չբնակեցված:

2022թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նրանք երկուսով մաքրություն են կատարել նշված հասցեում: Աշխատանքները կատարելուց հետո իրենց հետ վերցրել են նշված բնակարանից հավաքված աղբը, որպեսզի նետեն աղբամանը: Նկատելով, որ աղբը սովորականից ծանր է, հետաքրքրությունից դրդված՝ բացել են այն եւ տեսել թղթով փաթաթված բազմաթիվ ոսկեգույն մետաղներ: Համոզված լինելով, որ դրանք ոսկի են, հավասար բաժանել են միմյանց միջեւ, ապա կանանցից մեկն իր մասնաբաժինը թաքցրել է Կոտայքի մարզի Պառոշյան Երկաթգծի փողոցում գտնվող շենքի բնակարաններից մեկում, իսկ մյուսը՝ նույն մարզի Հրազդան քաղաքի Ավետիսյան փողոցում գտնվող տանը: Նախաքննության ընթացքում կատարված քննչական գործողությունների արդյունքում նշված անձինք ինքնակամ ներկայացրել են վերոնշյալ հասցեներում թաքցրած իրենց մասնաբաժինները: Նշանակվել է դատանյութագիտական, դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն: Կատարվել են խուզարկություններ, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն է տրվել ՀՀ ոստիկանությանը: Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ դեպքի հանգամանքները, այդ թվում՝ հայտնաբերված շուրջ 12,5կգ ընդհանուր քաշով ոսկու ձեռքբերման աղբյուրները բացահայտելու, օրինականությունը պարզելու եւ առնչություն ունեցած անձանց գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ԻՆՔՆԱՀՐԿԻԶՄԱՆ ՓՈՐՁ

ArmLur.am-ին հայտնի է դարձել, որ 66 տարեկան կինը իրավապահներին հայտնել է, որ ՀՀ գլխավոր դատախազության դիմաց պատրաստվում է հրկիզել իրեն: Իսկ ի՞նչն է պատճառը: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ նա իրավապահներին հայտնել է, որ իր այս քայլի պատճառն այն է, որ դատախազությունում իր ներկայացրած փաթեթը պատշաճ չեն ուսումնասիրում, տնից վտարման հետ կապված պարբերաբար դիմումներ է ներկայացնում, ու որեւէ բան չեն անում: Նշենք, որ ոստիկանները կնոջը տարել են բաժին:

Ո՞Վ Է ԴԱՏԱՎՈՐԸ

Ինչպես հայտնի է, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աշոտ Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, մասնակցելով 2020 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ժամը 09:00-ից մինչեւ 11:30-ն ընկած ժամանակահատվածում, Երեւան քաղաքի Դեմիրճյան փողոցում՝ ՀՀ Ազգային ժողովի մոտ Ազգային ժողովի բնականոն աշխատանքի խոչընդոտման նպատակով անցկացվող հավաքին, քննությամբ դեռեւս չպարզված մի խումբ անձանց հետ անտեսելով ոստիկանության ծառայողների կողմից պատշաճ վարքագիծ դրսեւորելու եւ հասարակական կարգը չխախտելու պահանջները, բողոքի ակցիա իրականացնող, իրավապատակ վարքագիծ դրսեւորող այլ անձանցից առանձնանալու, սեփական անձի կարծեցյալ առավելություններն ընդգծելու մղումներով, ուղղակի դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որը զուգորդվել է բռնության գործադրմամբ եւ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով. Գեւորգ Բաղդասարյանը եւ գործով չպարզված անձինք, ժամը 09:00-ի սահմաններում նշված վայրում փողոցի երթեւեկելի գոտիով երթեւեկող ավտոմեքենաների երթեւեկությանը խոչընդոտելով եւ արգելելով, նախապես իրենց հետ բերված հավկիթներով եւ ձնագնդիկներով, իրենց անձի առավելությունները վեր դասելով, անտեսելով ոստիկանների հորդորները, հարվածներ են հասցրել ՀՀ Ազգային ժողովի շենքին մոտեցող ավտոմեքենաներին՝ միաժամանակ հնչեցնելով հայհոյանքներ եւ անպարկեշտ արտահայտություններ, մասնավորապես՝ Գեւորգ Բաղդասարյանը, որը դեպքի վայր էր եկել իրեն պատկանող «Հյունդաի սոնատա» մակնիշի 36 LQ 298 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով, ստորացնելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների անձը, նախապես բերված հավկիթներով հարվածներ է հասցրել ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանին սպասարկող «Տոյոտա քամրի» մակնիշի 015 ՀՀ 01 հաշվառման համարանիշի ծառայողական ավտոմեքենային, որի մեջ է գտնվել Անդրանիկ Քոչարյանը:

Դրանից անմիջապես հետո Գ. Բաղդասարյանը բերման է ենթարկվել ոստիկանության Արաբկիրի բաժին: Այս գործը ԲԴԽ անդամ Սերգեյ Չիչոյանի եղբորորդին՝ Ժորա Չիչոյանը պետք է քննի, որը բավականին ուշագրավ հանգամանքերում դարձավ դատավոր....

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 19-ից 20-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԳՈՒՄԱՐԸ ԳԱՆՁԵԼ Է ԴԱՏԱՐԱՆՈՎ

«Հիտեքս պլաստիկ» ՓԲԸ-ն 2021 թ. նոյեմբերի 15-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, ընդդեմ «Դիլիջան ջուր» ՍՊԸ-ի, գումարի բռնագանձման պահանջի մասին հայցադիմում է ներկայացրել: Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022թ. հունվարի 10-ի որոշմամբ՝ դիմումն ընդունվել է վարույթ, նույն օրվա մեկ այլ որոշմամբ՝ մերժվել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին հայցվորի միջնորդությունը: Դիմելով դատարան՝ հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, որ 2021թ. հունիսի 6-ին «Հիտեքս պլաստիկ» ՓԲԸ-ն «Դիլիջան ջուր» ՍՊԸ-ին մատակարարել է 3 156 081 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ պրեֆորմաներ (նախակաղապարներ):

«Հիտեքս պլաստիկ» ՓԲԸ-ն մատակարարված ապրանքի համար վճարելու պահանջով բազմիցս դիմել է «Դիլիջան ջուր» ՍՊԸ-ին, սակայն հանքային ջրերի գործարանը ամբողջ պարտքից՝3 156 081 ՀՀ դրամից, 2021թ. սեպտեմբերի 22-ին վճարել է ընդամենը 300 000 դրամ, իսկ պարտքի մնացած մասը չի վճարել: 2022թ. նոյեմբերի 18-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջան քաղաքի նստավայրում դատավոր Նանա Դալլաքյանը վճռել է ««Հիտեքս պլաստիկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Դիլիջան ջուր» ՍՊԸ-ի՝գումարի բռնագանձման պահանջի մասին» հայցը բավարարել, «Դիլիջան ջուր» ՍՊԸ-ից հօգուտ «Հիտեքս պլաստիկ» ՓԲԸ-ի բռնագանձել 3.016,675 ՀՀ դրամ, որից 2.856.081 ՀՀ դրամը՝ որպես հիմնական պարտքի գումար, 160.594 ՀՀ դրամը՝որպես 2021 թվականի հունիսի 9-ից մինչեւ հայցադիմումը դատարան ներկայացնելու օրը՝2021թ. նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսի գումար՝սկսած 2021թ. նոյեմբերի 16-ից մինչեւ հիմնական պարտքի վերադարձման պահը, 2.856,081 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկել եւ բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների, «Դիլիջան ջուր» ՍՊԸ-ից հօգուտ «Հիտեքս պլաստիկ» ՓԲԸ-ի բռնագանձել 90.500,25 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար, ավել վճարված 8.699,75 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը վերադարձնել «Հիտեքս պլաստիկ» ՓԲԸ-ին, «Դիլիջան ջուր» ՍՊԸ-ից հօգուտ «Հիտեքս պլաստիկ» ՓԲԸ-ի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՈՐԱԾ ԻՐԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԴԺԳՈՀ ԵՆ «ԳԼՈԲԲԻՆԳ»-ԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթն երեկ գրել էր, որ բեռնափոխադրումներով զբաղվող «Գլոբբինգ» ընկերությունից վերջին շրջանում քաղաքացիները սկսել են շատ դժգոհել, եւ խաբեության մակարդակն այնքան է բարձրացել, որ նրանցով զբաղվում են պետական մարմինները: Գրել էինք, որ ընկերությունն արդեն հասցրել է տուգանվել ավելի քան 61 մլն դրամի չափով:


Elle Elle
9 декабрь в 21:51

XXX Վերջը ես էդ Globbing կոչեցյալի ձեռը շուտ եմ գնալու ծննդաբերության 😭😭😭 վերջին անգամն ա, որ օգտվում եմ սրանցից, 4,8կգ ապրանքս բերել են, տեսնեմ բացած ա ու սկոչած փակած, կշռեցի՝ 3,5 կգ, բացում եմ, մեջը շորերը կան, իսկ 4 հատ դուխի թոցրել են: Հիմա ես էս դուխիների պատվիրատուներին ի՞նչ ասեմ: Սրա՞ համար եմ սրանց էսքան վճարու՞մ, որ օրը 24 ժամ նեռվայնանամ իրանց անասուն առաքումների էրեսից... Հույս չունեմ, որ կգտնեն կամ կփոխհատուցեն: Համենայնդեպս, կասեք ում հետ է նման դեպք պատահել, ինչով է ավարտվել...

26 57 комментариев Поделились: 1

Hakobian Serineh
Ինձ հետա եղել 2 անգամ. Ծանրոցս պատռած ու սկոճած) 1 անգամ էդպես էլ ոչ մի կերպ չկարողացա ապացուցեմ , որ իրենց մեղքով է : Բայց 2 ամիս առաջ կրկին նույն պատմությունը ու զանգահարեցի ահաբեկեցի, որ արդեն ուրիշ ձևով եմ էս հարցին լուծում տալու ու հազիվ 1 ամսվա ընթացքում գումարս հետ ուղղարկեցին մի հազար անգամ էլ թուղթ ուղղարկեցին օնլայն ստորագրեցի :

Нравится Ответить 1 нед. Отредактировано

Նա ռա
Տարիներ առաջ 150 $ ապրանք էինք պատվիրել գլոբինգի միջոցով ուղակի ցնդեց այդ փաթեթը կորավ ու վատը նա էր որ դեռ չծնված բալիկիս համար էի ամբողջը պատվիրել ու գրեթե բոլորը առաջին անհրաժեշտության երեխես ծնվեց այդպես էլ չգտնվեց բայց գումարը վերադար... Ещё

Нравится Ответить 1 нед.

Elle Elle ответила · 1 ответ

Այս հրապարակումից հետո եւս խմբագրություն ընթերցողների ահազանգերը չեն դադարում: Քաղաքացի Արմինեն, ArmLur.am-ի հետ զրույցում պատմելով իր հետ տեղի ունեցածը, նշեց, թե սպառողները պաշտպանված չեն որեւէ կերպ: «Օգտվել եմ «Գնի՛ր իմ փոխարեն» ծառայությունից, որպեսզի իրենք ստանան, իրենք ստուգեն եւ փոխանցեն ինձ անվնաս վիճակում: Դրա համար ես հավելյալ գումար եմ վճարել եւ պատվիրել եմ այս դեպքում հեռուստացույց (108 հազար դրամ): Հեռուստացույցը բերել են ինձ փակ վիճակում, եւ ես պարզել եմ, որ այն ամբողջությամբ վնասված է: Ես կապ եմ հաստատել նրանց հետ, եւ «Գլոբբինգը» երկու շաբաթ ժամանակ խնդրեց՝պարզելու համար, թե որ փուլում է տեղի ունեցել: Իրենք ասացին, թե իրենց մեղքով չի եղել»,- նշեց քաղաքացին:

Որպես փոխհատուցում, Արմինեն նշեց, թե բեռնափոխադրումներով զբաղվող այս ընկերությունն իրեն առաջարկել է 45 հազար դրամ վճարել, որ ապրանքը հետ ուղարկեն տվյալ կազմակերպությանը որպես խոտան, եւ սա՝ այն դեպքում, երբ առաքելու համար նա 13 հազար դրամ էր վճարել:

Սա դեպքերից միայն մեկն է: ԱՄՆ-ից վերջերս նաեւ ավտոմեքենայի մարտկոց է պատվիրած եղել ՀՀ քաղաքացիներից մեկը՝բավական թանկարժեք, սակայն կրկին վնասված է եղել: Մեկ այլ քաղաքացի օծանելիքներ է պատվիրած եղել, եւ առաքել են ոչ ամբողջական վիճակում. 4 օծանելիքներ չեն եղել: Նման օրինակները բազմաթիվ են:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ ԸՆԿՃՎԱԾ ՉԵՆ

«Արդեն 10-րդ օրն է, ինչ փակ է Արցախը Հայաստանին կապող կյանքի ճանապարհն ու հումանիտար այն խողովակը, որով Արցախը ստանում էր այն ամենը, ինչն անհրաժեշտ է բնականոն կյանքի ու առօրյայի համար»,- ArmLur.am-ի հետ զրույցում տեսակետ է հայտնում Արցախի Ազգային ժողովի պատգամավոր Կարեն Հովհաննիսյանը:

Մեզ հետ զրույցում պատգամավորը փոխանցում է, որ Արցախում ընդհանուր տրամադրությունը մտահոգիչ է, բայց մարդկանց մոտ ընկճվածություն կամ խուճապ չկա:

«Մարդկանց մտահոգությունները, իհարկե, հիմնավոր են, քանզի բանական էակը հասկանում է՝ մեր կամքից անկախ ի հայտ եկած նոր խնդիրներ են առաջ գալու, որոնց պետք է կարողանալ համարժեք լուծումներ տալ: Մարդիկ պետք է կարողանան ապրել, աշխատել ու կազմակերպել կենցաղը: Արցախցու վճռականությունն անսասան է, ոգին՝ տոկուն, բոլորն էլ հասկանում են՝ պայքարը չի ավարտվել, իսկ դա հաղթահարելու ճանապարհը փշոտ է: Մարդիկ դա էլ են շատ լավ գիտակցում»,- ասում է պատգամավորը: Առանց Մայր Հայաստանի գործուն աջակցության, շարունակում է Հովհաննիսյանը, երկարատեւ շրջափակման պայմաններում կյանքն ու առօրյան կազմակերպելը դժվար եւ բարդ է լինելու, հետեւաբար, ասում է, հարցին ճիշտ հանգուցալուծում տալու համար թե՛ քաղաքական դաշտում, թե՛ անվտանգության ոլորտում պետք է անել հնարավորը: Թե ինչ գործընթացներից հետո կբացվի Լաչինի միջանցքը, պատգամավորն ինքն էլ չգիտի, ավելին՝ այդ մասին բարձրաձայնելը նպատակահարմար չի համարում, բայցեւ շեշտում է՝ այդ հարցում մեծ դերակատարում կարող է ունենալ միջազգային հանրության կոնկրետ, հասցեական արձագանքն ու Ադրբեջանի նկատմամբ ուղիղ ճնշումներ գործադրելը:

«Նախ պետք է ապահովել, որ Ադրբեջանը կատարի 2020-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ նախատեսված իր պարտակությունները, ապա թույլ չտալ, որ Արցախում հումանիտար աղետ տեղի ունենա: Եթե բանը դրան հասնի, ապա Արցախի ժողովուրդն իրավունք է ունենալու իրեն հասու բոլոր միջոցներով պաշտպանել իր կյանքի իրավունքը»,- ամփոփում է մեր զրուցակիցը:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 16 ՃՏՊ. 25 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՄՐՑՈՒՅԹ՝ ՌՈԲՈՏԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայաստանի տարբեր մարզերում գործող «Արմաթ» ինժեներական խմբակների՝ ռոբոտաշինությամբ զբաղվող դպրոցականներին համախմբել է «ԱրմՌոբոտիքս 2022» հայաստանյան 14-րդ առաջնությունը:

Այս տարի մրցույթի թեման ագրոտեխնոլոգիաներն են. դպրոցականները ստեղծել են ռոբոտներ, որոնք ջրում են հողը, կերակրում կենդանիներին, բերքը հավաքում ու թեթեւացնում ֆերմերի հոգսը: «ԱրմՌոբոտիքս 2022»-ի հովանավորը Հայաստանում գյուղոլորտի ֆինանսավորման առաջատար «Ակբա» բանկն է, որը լայնամասշտաբ ներդրումներ է իրականացնում խելացի գյուղատնտեսության տարբեր ոլորտներում:

«Կարեւոր կոմպոնենտը ինժեներական գաղափարների պահպանումն ու զարգացումն է, որը Հայաստանում, թերեւս, ամենալավը իրականացվում է «Արմաթ» հարթակներում: Այսօրվա խնդիրները, որոնք երեխաները լուծում են, բավականին բարդ են: Կարեւոր է, որ Հայաստանում կա հարթակ, որտեղ դպրոցահասակ երեխաները կարողանում են զբաղվել ինժեներական լուծումների, ռոբոտների ստեղծման ոլորտում եւ իրենց մտքերը կիրառել: Եվ պետք է հիշել մի բան, որ այսօրվա չստացվածը եւս մեկ քայլ է դեպի հաջողություն»,- նշել է «Ակբա» բանկի հասարակայնության հետ կապերի թիմի ղեկավար Նարեկ Ասատրյանը:

«Գյուղատնտեսությունը մեր երկրի ամենամեծ մասի զբաղվածությունն է ապահովում: Արդյունավետության բարձրացման համար կարեւոր է տեխնոլոգիաների ներդրումը գյուղատնտեսության մեջ: Նոր սերնդում այս տարիքից մենք դնում ենք այդ ձգտումը եւ մոտիվացիան, որ խնդիրներ լուծեն իրենց ընտանիքի, հարեւանի ու համայնքի համար»,- նշում է Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն Հայկ Չոբանյանը:

«Արմաթ» ինժեներական լաբորատորիաները հիմնադրվել են հայկական տեխնոլոգիական ոլորտի նվիրյալ, ԱՏՁՄ հիմնադիր Կարեն Վարդանյանի առաջնորդությամբ: Այժմ Հայաստանում գործում է 600-ից ավելի «Արմաթ» խմբակ. նախատեսվում է, որ մինչեւ 2025 թվականը եւս 700 դպրոցում երեխաները կկարողանան զբաղվել ինժեներական աշխատանքներով եւ ուսումնասիրություններով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԿԱՐԳ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել այլընտրանքային (հեղինակային, փորձարարական եւ միջազգային) կրթական ծրագրերի փորձաքննության անցկացման, ճանաչման եւ հաստատման կարգի նախագիծը:



ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ, համաձայն նախագծի, այլընտրանքային է համարվում հանրակրթական ծրագրից ուսումնական պլանով, ուսուցման կազմակերպման ձեւով եւ առարկայական ծրագրերով տարբերվող, հանրակրթական պետական չափորոշչի վերջնարդյունքներն ու կարողունակություններն ապահովող եւ օրենսդրությամբ սահմանված կարգով որպես այլընտրանքային երաշխավորված հանրակրթական ծրագիրը:

Այլընտրանքային կրթական ծրագրերն են՝

- հեղինակային կրթական ծրագիր (ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հեղինակած եւ, օրենսդրությամբ սահմանված կարգով, որպես հեղինակային երաշխավորված հանրակրթական ծրագիր),
- փորձարարական կրթական ծրագիր («Հանրակրթության մասին» օրենքով սահմանված կրթական աստիճանի առավելագույն տեւողությամբ ներդրված հանրակրթական ծրագիր),
- միջազգային կրթական ծրագիր (միջազգային պայմանագրի հիման վրա կամ տասը եւ ավելի օտարերկրյա պետություններում իրականացվող հանրակրթական ծրագիր):

Այլընտրանքային կրթական ծրագիրը՝ որպես երաշխավորված հանրակրթական ծրագիր, ենթակա է գործածության կարգի պահանջներին համապատասխան փորձաքննության ներկայացնելուց, դրական եզրակացություն ստանալուց եւ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվելուց հետո:

Փորձաքննության արդյունքում կազմվում է փորձագիտական եզրակացություն, որն ընդգրկում է այլընտրանքային կրթական ծրագրի ամբողջական վերլուծությունը՝ կարգով սահմանված պահանջներին համապատասխան: Այն ներառում է փաստարկներ եւ հիմնավորումներ նյութի բովանդակությանը եւ կառուցվածքին ներկայացվող չափանիշներին եւ ցուցիչներին (գիտականություն, մատչելիություն եւ մանկավարժական, մեթոդական, լեզվաոճական եւ այլ բնութագրիչներ) համապատասխանության վերաբերյալ:

Այլընտրանքային կրթական ծրագրի փորձաքննությունն իրականացնում է մանկավարժի որակավորում շնորհող բուհը՝ իր մասնագետների, մասնագիտական խմբերի, համապատասխան ստորաբաժանումների (ամբիոններ) մասնագետների եւ հանրակրթական, ինչպես նաեւ, ըստ անհրաժեշտության, ԳԱԱ գիտական, գիտահետազոտական կազմակերպությունների գիտաշխատողների ներգրավմամբ, կամ մրցութային եղանակով կարող է պատվիրակվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց:

Պատվիրատուի տրամադրած փորձարարական կրթական ծրագիրը ներկայացվում է Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն՝ փորձաքննության, որի դրական եզրակացության հիման վրա՝ ծրագիրը երաշխավորվում է գործածության: Կրթական աստիճանի տեւողությամբ փորձարարական կրթական ծրագրի գործարկման ժամանակահատվածում ԿԶՆԱԿ-ը յուրաքանչյուր տարի առնվազն երկու անգամ իրականացնում է մշտադիտարկում՝ ուսուցման կազմակերպման ձեւի, բովանդակության, մեթոդաբանության, նպատակաուղղվածության վերաբերյալ: ԿԶՆԱԿ-ը կրթական ծրագրի ներդրման սահմանված ժամկետի ավարտին ներկայացնում է ամփոփիչ եզրակացություն, որը դրական լինելու դեպքում կարող է որպես հեղինակային ծրագիր ներկայացվել երաշխավորման՝ ըստ կրթական աստիճանների:

Միջազգային կրթական ծրագիրը ճանաչվում է գործածության ենթակա, եթե առկա են հավաստի տեղեկություն տասը եւ ավելի օտարերկրյա պետություններում որպես հանրակրթական ծրագիր իրականացվելու մասին, միջպետական նախնական համաձայնություն, ինչպես նաեւ համապատասխան դրական եզրակացություն:

Փորձագիտական դրական եզրակացության հիման վրա՝ ԿԳՄՍ նախարարի հրամանով ներկայացված ծրագիրը երաշխավորվում է գործածության: Բացասական կարծիքի դեպքում ծրագիրը վերադարձվում է ներկայացնողին՝ կցելով եզրակացությունը եւ հիմնավորումները:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են ներկայացնել մինչեւ դեկտեմբերի 29-ը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԽԱՂԱՅԻՆ ԲԻԶՆԵՍԻ ԴԵՄ

ՀՀ ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ քննարկեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գեւորգ Պապոյանի հեղինակած օրենքի նախագիծը, որով սահմանվում է, որ Հայաստանում չի կարող լինել այնպիսի հեռուստաընկերություն կամ ռադիոընկերություն, որի անվանումը կարող է կապվել խաղային բիզնեսով զբաղվող կազմակերպության անվանման հետ. այդպիսի հեռուստաընկերությունները եւ ռադիոընկերությունները պետք է փոխեն իրենց անվանումները:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ԱԺ արտահերթ նիստում ներկայացրեց հեղինակ Գեւորգ Պապոյանը:

«Մենք այլեւս չենք ունենա այնպիսի հեռուստաընկերություն կամ ռադիոընկերություն, որը իրավունք է ստանում հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից, եւ որի անվանումը վերջին 10 տարվա ընթացքում կարող ենք ուղղակիորեն կապել, կամ այն շփոթության աստիճան կարող է նման լինել այնպիսի անվանման, այնպիսի ապրանքանիշի հետ, որը 10 տարվա ընթացքում զբաղվել է խաղային բիզնեսով՝ շահումով խաղով, տոտալիզատորով եւ այլն: Այսպիսով, չենք կարող ունենալ խաղային բիզնեսի հայտնի ներկայացուցիչների անվանումներով հեռուստաընկերություն, ռադիոընկերություն»,-ասաց Պապոյանը:

Պատգամավորը վստահեցրեց՝ պետությունը տնտեսական առումով խնդիր չունի, գործարարների, բիզնեսի հետ խնդիր չունի, խնդիր ունի խաղամոլության դեմ պայքարի հարցում, իսկ դա անուղղակի գովազդ է ստացվում, այն ուղղակիորեն ասոցացվում է խաղի հետ:

Նախագծի ընդունումից 6 ամիս հետո գործող այդպիսի հեռուստաընկերությունները եւ ռադիոընկերությունները ստիպված կլինեն իրենց անվանումները փոխել եւ ընտրել այնպիսի անվանումներ, որոնք կապ չեն ունենա խաղային բիզնեսի հետ:

«Սա ուղիղ կապված է խաղամոլության դեմ պայքարի մեր հանձնառության հետ»,- ընդգծեց Պապոյանը՝ հավելելով, որ իշխանության գործողությունները միտված են խաղամոլության տարածման ահագնացող տեմպը կոտրելուն:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ԿԱՏԵՂԾՎԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԵՊՀ գիտխորհուրդը որոշում է կայացրել միավորել Ֆիզիկայի եւ Ռադիոֆիզիկայի ֆակուլտետները:

Ինչո՞ւ են նման որոշում կայացրել. ArmLur.am-ը զրուցել է ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի հետ:

«Ֆակուլտետը չի փակվել, այլ Ֆիզիկայի եւ Ռադիոֆիզիկայի ֆակուլտետները միաձուլվել են՝դառնալով Ֆիզիկայի ինստիտուտ: Ավելին նշեմ, որ երկու ֆակուլտետներից գիտխորհուրդի նիստում որեւէ առարկություն չի եղել, բոլորը համակարծիք են եղել այս որոշման հետ: Իրականում այս ծրագիրը երկար քննարկվել եւ մանրակրկիտ ուսումնասիրվել, վերլուծությունների է ենթարկվել: Այս պահին Ֆիզիկայի բաժնում սովորում է 197 ուսանող, իսկ Ռադիոֆիզիկայում՝ 301, այսինքն՝ միացնելով՝ ունենում ենք բավականին կոմպակտ մի կառույց: Նախկինում այս բաժինները բաժանվել էին անձնական խնդիրների պատճառով, որը վերկանգնեցինք մեր կրթական բարեփոխման ծրագրի շրջանակներում»,-նշեց մեր զրուցակիցը:

Նշենք, որ երեկ ԵՊՀ-ում տեղի է ունեցել ԵՊՀ ԳԽ նիստը, որի ժամանակ, ի թիվս տարբեր որոշումների, հաստատվել են ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների լուծարման ու ստեղծման վերաբերյալ նախագծեր, այդ թվում՝ Ֆիզիկայի եւ Ռադիոֆիզիկայի ֆակուլտետների միավորման ու դրանց արդյունքում Ֆիզիկայի ինստիտուտի ստեղծման վերաբերյալ նախագիծը, ներկայացվել են կատարողականներ ու հաշվետվություններ, հրատարակության է երաշխավորվել երկու աշխատություն:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԵՔԻԱԹ

«ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏՐ ԳՈՐՏԸ»՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Ամանորի տոների առթիվ Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի բեմ կբարձրանա Դմիտրի Դաշկովի «Արքայադուստր գորտը» ներկայացումը՝ ըստ ռուսական ժողովրդական հեքիաթի:

Հեքիաթը սիրո եւ հավատի մեծ ուժի մասին է առ այն, որ, ինչ դավեր էլ չարը նյութի, բարությունն ու սերը միշտ կհաղթեն:

Ներկայացման բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Կարեն Ներսիսյանն է: Ներկայացման մեջ զբաղված են թատրոնի ավագ եւ երիտասարդ սերնդի դերասանները: Ներկայացման բեմանկարիչը Արթուր Հարությունյանն է, զգեստների նկարիչը՝ Մարի Սարգսյանը, երաժշտական ձեւավորումը՝ Կարեն Ներսիսյանի, երաժշտությունը՝ Մարինա Լուկաշեւիչի, պարերը՝ Նունե Կիրակոսյանի:

Բեմադրությունը նախատեսված է տարբեր տարիքային խմբերի երեխաների համար: Ներկայացումից առաջ փոքրիկներին հյուր կգան Ձմեռ պապն ու Ձյունանուշը:

ԼՈՒՐԵՐ

ԴԻՄԱՎՈՐԵԼ ԵՆ ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԸ

Արգենտինայի ֆուտբոլի ազգային թիմն արդեն Բուենոս Այրեսում է, որտեղ հավաքականին դիմավորել են հարյուր հազարավոր երկրպագուներ:

Մեսին եւ հավաքականի գլխավոր մարզիչ Լիոնել Սկալոնին առաջինն են դուրս եկել օդանավից՝ ցուցադրելով աշխարհի գավաթը: Օդանավակայանից մինչեւ Արգենտինայի ֆուտբոլի ֆեդերացիա ճանապարհի ամբողջ երկայնքով հարյուր հազարավոր երկրպագուներ ուղեկցել են աշխարհի նորընծա չեմպիոններին. երթն ուղեկցվել է Մարադոնային եւ ազգային թիմին նվիրված երգերով:

Ֆուտբոլի աշխարհի առաջնության եզրափակչում միմյանց դեմ մրցեցին Արգենտինայի եւ Ֆրանսիայի ընտրանիները: Հանդիպման հիմնական ժամանակն ավարտվեց ոչ-ոքի՝ 3:3 հաշվով: Արգենտինա-Ֆրանսիա՝ 3:3: Խաղը տեղափոխվեց 11-մետրանոց հարվածաշար, որտեղ առավել դիպուկ էին արգենտինացիները՝ 4:2: Արգենտինան ֆուտբոլի աշխարհի առաջնության չեմպիոն դարձել էր նաեւ 1978 եւ 1986 թվականներին, իսկ, ընդհանուր առմամբ, հարավամերիկացիները Մունդիալի եզրափակիչ հասել են 5 անգամ:

ԵՎՐՈՊԱՅԻ ԲԼԻՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Գրոսմայստեր Շանթ Սարգսյանը երրորդն է շախմատի Եվրոպայի բլից առաջնությունում: Լեհաստանի Կատավիցե քաղաքում ընթացող Եվրոպայի բլից առաջնությունում Շանթ Սարգսյանը, հավաքելով 17,5 միավոր, լրացուցիչ միավորներով գրավել է երրորդ հորիզոնականը: Նույնքան միավորով 1-րդ եւ 2-րդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրել են Դավիթ Նավարան եւ Մասիչ Կլոկովսկին: Հայաստանի մյուս ներկայացուցիչը՝ Ռոբերտ Հովհաննիսյանը, 16,5 միավորով 9-րդն է:

ԳԼԱՍԿՈՅԻ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

Ամերիկահայ ռեժիսոր Մայքլ Գուրջյանի «Ամերիկացի» ֆիլմը կներկայացվի Գլասկոյի կինոփառատոնում: Այս մասին հայտնի է դարձել ֆիլմի պաշտոնական ինստագրամյան էջում արված հրապարակումից:

Հրապարակված լուսանկարում նշված է, որ ֆիլմը մասնակցելու է Գլասկոյի կինոփառատոնում, որը կայանալու է 2023 թվականի մարտի 1-ից 12-ը: Ֆիլմի մասնակցության մասին մանրամասներ հայտնի չեն. չի նշվում՝ արդյոք ֆիլմը ցուցադրվելու է, թե նոմինացվելու է:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ֆիլմը ներկայացվել էր Սալեռնոյի 76-րդ միջազգային կինոփառատոնում: Այս մասին ռեժիսորը հայտնել էր իր ինստագրամյան էջում: Հրապարակմանը կից Գուրջյանը գրել էր. «Մենք գնում են Իտալիա: Շնորհակալություն Սալեռնոյի 76-րդ միջազգային կինոփառատոնին՝ «Ամերիկացի» ֆիլմին մասնակցության հնարավորություն տալու համար»:

● Դեկտեմբերի 23-ին «Կայարան» թատրոնում տեղի կունենա «Գրինչ» ամանորյա ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1500-2000 դրամ: Սկիզբը՝ժամը 14:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ո՞րն է աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:

Մոնիկա Ղումաշյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից կողմերի, իսկ մինչեւ տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին: Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաեւ կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային ստորագրությամբ կնքված աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը էլեկտրոնային եղանակով փոխանցվում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:

Աշխատանքի անցնելուց առաջ գործատուն կամ նրա լիազորած անձը պարտավոր է աշխատանքի ընդունվող անձին պատշաճ ծանոթացնել աշխատանքի պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին (դրա առկայության դեպքում), ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող գործատուի այլ իրավական ակտերին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատողը պարտավոր է աշխատանքային պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի: Աշխատանքային պայմանագրում նշված օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը հիմք է աշխատանքային պայմանագրի լուծման համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է Մաքսային միության առրանքը:

Լեռնիկ Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մաքսային միության մաքսային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ Մաքսային միության ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ապրանքներն են, որոնք ամբողջությամբ արտադրվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում, ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք եւ ստացել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ՝ նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, պատրաստվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում նշված ենթակետի երկրորդ եւ երրորդ պարբերություններում նշված ապրանքներից եւ (կամ) օտարերկրյա ապրանքներից եւ, նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, ձեռք են բերել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մաքսային միության մաքսային օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի դեպքում Մաքսային միության մաքսային տարածք ավելի վաղ ներմուծված ապրանքները կամ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները, որոնք ձեւակերպվել են «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով, այդ տարածքից արտահանվում են առանց ներմուծման մաքսատուրքերի գումարների վճարման եւ (կամ) ներմուծման մաքսատուրքերի վճարված գումարների վերադարձման (հաշվանցման) եւ առանց ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեկ՝ վաղ առավոտից, արտակարգ իրավիճակ էր ստեղծվել Երեւանում: Ժամը 06:50-ի սահմաններում Դավիթաշենի կամրջի վրա ճանապարհի մերկասառույցի պատճառով բախվել էին մոտ 40 տարբեր մակնիշի ավտոմեքենաներ:

Դավիթաշենի կամուրջը երկկողմանի փակվել էր: Այս իրավիճակը ստեղծվել էր այն պատճառով, որ պատկան մարմինները չեն բարեհաճել կամուրջը մշակել, աղ ու ավազ լցնել եւ որոշել են դա անել միայն ժամը 08:50-ին: Դրանից հետո էլ երկար ժամանակ պահանջվեց կամուրջը բացելու եւ երթեւեկությունը վերականգնելու համար: Այս ամենը եւս մեկ անգամ ցույց է տալիս պատկան մարմինների, մասնավորապես՝ քաղաքապետարանի անգործությունը, երբ իրենց անմիջական պարտավորությունը չանելու հետեւանքով վաղ առավոտից ծայրահեղ իրավիճակ էր ստեղծվել կամրջին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.12.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: